



A close-up portrait of an elderly man with white, wavy hair. He is looking slightly downwards and to the right with a serious expression. He is wearing a light-colored shirt and a dark tie.

ՍԵՐԳԵՅ
ՍԱՐԻՆՅԱՆ

ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



ԱՊՐԵՐԵՐԵՆԻ

ՀՀԳԱԱ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆ

ԿԵՆՍԱՍԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



ՀՀԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԻՆՏԵՐՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՏԴ 016:929:82.0

ԳՄԴ 91.9:83

Ս 265

Կազմող՝ Բ.Գ.Թ. Մանե Սարինյան

*Խմբագիրներ՝ Բ.Գ.Թ. Սիրանուշ Մարգարյան
Բ.Գ.Դ. Վանո Եղիազարյան*

Սերգեյ Սարինյան. Կենսամատենագիտություն / Կազմող՝
Ս 265 Մանե Սարինյան.- Եր.: Արմավ, 2019.- 100 էջ:

ՀՏԴ 016:929:82.0

ԳՄԴ 91.9:83

ISBN 978-9939-78-061-0

© Մանե Սարինյան, 2019

© Արմավ, 2019

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի մատենագիտությունը ներկայացնում է ականավոր գրականագետի և գրականության տեսաբանի գիտական ուղին: Մատենագիտությունն ըստ կառուցվածքի կազմված է երկու բաժնից: Առաջին մասն ընդգրկում է գիտնականի մենագրությունները, գրականագիտական հոդվածների և ուսումնասիրությունների ժողովածուները, կոլեկտիվ աշխատությունները, հոդվածները, գրախոսությունները, գրքերի առաջաբաններն ու վերջաբանները, դասագրքերը, հարցազրույցներն ու երկխոսությունները, որոնք համակարգված են ժամանակագրական սկզբունքով:

Մատենագիտության երկրորդ մասում ընդգրկված են Սերգեյ Սարինյանի մասին գրված հոդվածները, գրախոսություններն ու անդրադարձները՝ դարձյալ ժամանակագրական կարգով:

Սերգեյ Սարինյանի մատենագիտությունը կազմելիս օգտվել ենք Գիտությունների ազգային ակադեմիայի www.flib.sci.am կայքից /ի դեպ նշենք, որ տվյալ կայքում սկզբնապես կար ընդամենը 130 գործ, և ներկայիս ցուցակը համալրվել է մեր տրամադրած նյութերով/, Հայաստանի Ազգային գրադարանի Մատենագիտության բաժնի քարտադարանից, Հայաստանի ազգային արխիվում գտնվող Սերգեյ Սարինյանի անձնական արխիվային նյութերից, տան անձնական արխիվից, Հայաստանի գրադարանների առցանց համահավաք գրացուցակից, ինչպես նաև թվանշային և թվայնացված հայկական պարբերականների Գրահավաք կայքից /grahavak.blogspot.com/:

Կան հոդվածներ /մոտավորապես 10/, որոնց սկզբնաղբյուրը կամ տարեթիվը չենք կարողացել մինչև վերջ ճշտել, սակայն դրանց մի մասի թերթային և ամսագրային կտրածոները գտնվում են Հայաստանի ազգային արխիվում Սերգեյ Սարինյանի անձնական ֆոնդում: Մատենագիտության մեջ այդօրինակ չճշգրտված աղբյուրների կողքին դրված է հարցական նշան: Սերգեյ Սարինյանն իր անձնական արխիվային նյութերը՝ ձեռագրերը, աշխատությունների մշակված տարբերակները, նամակները, լուսա-

նկարները, իր գործունեությանն ու կենսագրությանն առնչվող նյութերն ու փաստաթղթերը, հանձնել է Հայաստանի ազգային արխիվ 2010 թվականին:

Կարծում ենք, որ ներկայացված մատենագիտությունը Սերգեյ Սարինյանի աշխատությունների ամբողջական ցանկը չէ, և տարիների ընթացքում կհամալրվի այս պահին մեր ուշադրությունից վրիպած այլ աղբյուրներով:

Մանե Սարինյան

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆ. ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆԸ

Այսօր, երբ, ցավոք, ավարտվել է Սերգեյ Սարինյանի կյանքի, ինչպես ինքն էր սիրում ասել, կենսաբանական, կամ «սոցիալական ժամանակը», թվում է, ավելի հստակ ու ամբողջական են երևում նրա թե՛ մարդկային անհատական, թե՛ գիտական ստեղծագործական կերպարի էական գծերն ու հատկանիշները:

Իր ամբողջ երկարամյա գիտակցական կյանքը նա նվիրել է հայրենի գրականագիտության ու գրական քննադատության զարգացմանը: Ավելի քան վեց տասնամյակ ընդգրկող նրա գրական գիտական կենսագրությունն անցել է ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի պատերից ներս՝ ասպիրանտից /1949 թ./ մինչև ակադեմիկոս /1996 թ./: Նրա գործուն մասնակցությամբ են հրատարակվել «Հայ նոր գրականության պատմության» հինգհատորյակը /1962-1979 թթ./, որն 1980 թվականին արժանացել է Հայկական ՍՍՀ պետական մրցանակի, «Հայ քննադատության պատմություն» երկհատորյակը /1985, 1998 թթ./: Նա իրեն հատուկ գիտական բժախնդրությամբ ու ջանադրությամբ էր ղեկավարում «Հայոց գրականության պատմություն» նոր վեցհատորյակի՝ հայ նոր գրականության շրջանն ընդգրկող երրորդ և չորրորդ հատորները, որոնցից առաջինը ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությամբ լույս տեսավ 2015 ին, իսկ երկրորդը գրեթե պատրաստ է հրատարակության:

Սերգեյ Սարինյանն անցյալ դարի 50-ական թվականներին ասպարեզ եկած գրականագետ քննադատների սերնդի ակնառու ներկայացուցիչներից էր, ում «կյանքն ու գործը ամբողջապես նույնացավ այդ սերնդի պատմությանը» և որի «ստեղծումների, որոնումների ու հայտնության ընդհանուր համարժեքի մեջ» նա փորձեց ներդնել երկու դարերի հայոց գրականության էջերի գեղագիտական փոխհարաբերակցական իր մեկնությունները, որոնք հասցրեց ամփոփել գրականության պատմության և տեսության, գրական դպրոցների, գրականագիտության մեթոդաբանության հարցերին, առանձին դասական գրողների ստեղծագործությանը նվիրված իր

գրականագիտական ժառանգության վեց հատորների մեջ /1988 - 2015 թթ./: Ժամանակի առանձնահատկություններից ելնելով, այդ սերնդի գիտական որոնումները հետամուտ էին մինչ այդ հաստատուն թվացող «արժեքների վերագնահատությանը», ինչը ենթադրում էր գիտական նյութի քննություն ոչ միայն պատմական, այլև արդիական հայեցակետերից, այլ խոսքով՝ գրականագիտության և քննադատության մեթոդաբանական ընդհանրություն, որի «հիմքը գիտականությունն է»:¹

Գրականագետի հետաքրքրությունների շրջանակը հենց սկզբից պայմանավորված է եղել իր անհատականության՝ խառնվածքի ու մտածողության առանձնահատկություններով: Դա ամենից առաջ իր ներքին մտավոր-գգացական հնարավորությունների զորեղության գիտակցման վրա հիմնված մեծ ինքնավստահությունն էր: «Ես անհանգիստ ոգի եմ,- խոստովանել է նա,- մի անհասկանալի խզում կա իմ ներքին աշխարհի և արտաքին աշխարհի միջև»: Արտաքին աշխարհի անկատարությունն ու նյութապատկությունը նրա բնավորությանը հաղորդել են «ներքին խռովք, /.../ բնական հոռետեսություն», բայց հենց դրանք էլ կռել են նրա կամքը, օժտել «մաքառման ներքին մղումով» և հայացքը ուղղել «դեպի վերերը»: Ահա թե ինչու, նրա միտքը մշտապես նպատակամիտված էր դեպի սորը, չպեղվածը: Ըստ էության, անհատական խառնվածքի այս հատկանիշներն էին ձևավորել մտքի-մտածողության այն քիչ հանդիպող որակը, որը ձգտում էր **համակարգվածության**, իսկ դա **գիտականության** նախապայմանն է: Ս. Սարինյանը որևէ երևույթ չէր դիտում առանձնության մեջ, այլ անպայմանորեն դրա ներքին /երբեմն՝ թաքուն, անտեսանելի/ պատճառահետևանքային կապերի, **համակարգի** կոնտեքստում, ինչպես ինքն էր ասում՝ «իրերի աշխարհից» անցում կատարելով դեպի «սիստեմների աշխարհը»: Այդ է պատճառը, որ ինչ նյութի էլ ձեռք է զարկել Սարինյանը՝ լինի դա գրականության պատմություն և տեսություն /«Քննադատական ռեալիզմի սկզբնավորումը հայ գրականության մեջ», «Հայկական ռոմանտիզմ»/, առանձին հեղինակների ստեղծագործությանը նվիրված մենագրություն / «Բաֆֆի», «Մուրացան», «Լևոն Շանթ» և այլն/, գաղափարաբանության քննություն

1 Ս. Սարինյան, Հայոց գրականության երկու դարը, Գիրք առաջին, Եր.Սով. գրող, 1988, էջ 3:

/«Հայ գաղափարաբանություն»/ թե որոշակի ժամանակահատվածի գրական ընթացքի հետազոտություն, ամենուր նկատելի է **պատմականության, գիտականության** կնիքը: Այստեղից էլ՝ Սերգեյ Սարինյանի մտածողության մյուս կարևոր սկզբունքը՝ **ռացիոնալիզմը**, ինչը՝ նրա բնորոշմամբ, ապահովում է հետազոտական մտքի «ազատագրումը մափրիզմից և սոցիոլոգիական սխեմատիզմից, նրա տեսադաշտի և աշխարհայացքի ընդլայնումը պատմության, փիլիսոփայության և բնական գիտությունների /այս շարքին մենք կավելացնենք նաև՝ ժամանակի արվեստների - Պ.Դ./ հետազոտական փորձով»: Մեթոդաբանական նշված դրույթները, իր իսկ խոստովանությամբ, «ուրույն ուղղություն նշանավորեցին հայ գրականագիտության պատմության մեջ՝ **ակադեմիական դպրոցը**»², որի հետ և նա կապում էր հայոց գրականագիտական մտքի զարգացման հեռանկարը:³

Կարելի է ասել, որ Ս. Սարինյանի նպատակը **գրականության փիլիսոփայության** ըմբռնումն ու բացահայտումն էր, որը միևնույն ժամանակ խոր մակարդակի վրա է դնում գրականության երևույթների քննությունը՝ իբրև գիտական հետազոտության առարկա: Նա համոզված էր, որ «Գտնել գրողի մտադրույթը գեղարվեստական երկում, միասնական ելակետի ենթարկել երկի բազմանշանակ պատկերների միացնող օղակները, դիտել այդ ամենը բովանդակության ու ձևի միասնության մեջ՝ այս է գրականագիտության կոմպլեքսային հետազոտության ուղին և դա է, որ գրականագիտությունը բարձրացնում է փիլիսոփայական համադրության»:

⁴ Շատ տրամաբանական էր Սարինյանի հարցադրումը՝ եթե կա պատմության փիլիսոփայություն, արվեստի, կրոնի, իրավունքի փիլիսոփայություն, ինչո՞ւ չի կարող լինել գրականության փիլիսոփայություն, որի իրավունքների հաստատմանը նա նվիրել էր վերջին տարիների իր հետազոտական ջանքերը:

Ասվածից այլևս պարզ պետք է լինի, որ նման մտածողության տեր հետազոտողը ոչ միայն արժևորելու էր **գաղափարի** /ըստ

² Այստեղ և հետագա շարադրանքում հեղինակից մեջբերումներում մեր ընդգծումները տրվում են շղա-ով:

³ Ս. Սարինյան, «Ետադարձ մտորումներ», Հայոց գրականության երկու դարը, Գիրք չորրորդ, Եր., Տիգրան Մեծ, 2004, էջ 543-544:

⁴ Ս. Սարինյան, Գեղարվեստական գրականության պատմականությունը, Եր., Սով. գրող, 1979, էջ 20-21:

Նրա, ավելի լայն առումով՝ **գաղափարաբանության/** առկայությունը գրականության և արվեստի, ազգային ու հասարակական մտքի տիրույթներում, **ստեղծագործական մեթոդի** անհրաժեշտությունը, առանց որի «չի կարող գիտություն լինել», այլև մշտապես գտնվելու էր «մտավորականության **ազատամտական թևի** դիրքերում»:⁵

Ս. Սարինյանի համար սկզբունքային նշանակություն ուներ այն հարցադրումը, որ **«Առանց գրական ուղղությունների, գեղարվեստական մեթոդների տարրորոշման չի կարող լինել գրականության գիտական պատմություն, առանց գեղարվեստական մեթոդի հստակ իմացության չի կարելի դատել գրողի գեղագիտական իդեալի, գեղարվեստական երկի տիպաբանական առանձնահատկությունների մասին»:**⁶

Հենց այդ դիրքերից էլ 50-ական թվականների կեսերից գրականագետը ձեռնամուխ եղավ հայկական ռոմանտիզմի գիտական համակողմանի, քննությանը, որը դարձավ Նրա ստեղծագործական վաստակի անկյունաքարային երևույթներից մեկը: Խնդիրը կարևորվում էր Նրանով, որ թեև անցյալ դարի կեսերին, մասնավորապես, գրականագետներ Ս. Մկրյանի, Էդ. Ջրբաշյանի ուսումնասիրություններում, արդեն իսկ առաջընթաց քայլեր էին կատարվել հայկական ռոմանտիզմի սահմանների նեղացման միտումները հաղթահարելու, այն ամբողջ ծավալով ու գրական-պատմական նշանակությամբ ընկալելու, ռոմանտիզմի պատմականության, նախորդ գեղարվեստական մեթոդների հետ Նրա հարաբերակցության հարցի գիտական լուսաբանման ուղղությամբ, այնուամենայնիվ, **«Ե՛վ գիտական, և՛ իրավական տեսակետից դեռ պետք է շահել հայկական ռոմանտիզմի դատը,-** գրում է Ս. Սարինյանը,- մենք դեռ չենք հաղթահարել ռոմանտիզմի մասին վաղեմի նախապաշարմունքը, **մեր ռոմանտիզմը գրականության պատմության մեջ դեռ չի վավերացրել իր իսկական տեղը»**⁷ և արդյունքում՝ **«պատմական համադրության մեջ Նրա տեղի որոշումը, վերջին հաշվով, մնում էր չբացահայտված»:**⁸

5 Ս. Սարինյան, Հայոց գրականության երկու դարը, Գիրք չորրորդ, էջ 543:

6 Ս. Սարինյան, Հայկական ռոմանտիզմ, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1966, էջ 57:

7 Նույն տեղում, էջ 56:

8 Նույն տեղում, էջ 14:

Ս. Սարինյանը տեսական իր ընդհանրացումներում մեծ տեղ էր հատկացնում գեղարվեստական մեթոդի **պատմականության**, ինչպես նաև մեթոդների տրամաբանական հաջորդականության, **պատմական փոխկապվածության** հարցերին: Նա ելնում էր տեսական այն դրույթից, որ «**Պատմականության խորհուրդը** ոչ թե այս կամ այն մասնակի փաստի գոյության հաստատումն է, այլ գլխավոր օրինաչափության կռահումը՝ գոյաբանական բոլոր նախադրյալների պատճառակցությամբ»:⁹ Մասնավորապես, ռոմանտիզմի ուղղության առաջացման պատմական հիմքերն ուսումնասիրելիս, նա ընդգծում է, որ դա անմիջականորեն կապված էր նախորդ շրջանի լուսավորիչների երազած «բանականության թագավորության» գեղեցիկ պատրանքների փլուզման, մարդկանց հուսախաբության հետ. «Ընդհանուր հիասթափությունը, կատարված դեպքերի պատմական հեռանկարները չըմբռնելը, դժգոհությունը նոր կարգերից առաջ բերեց մի հախուռն ռեակցիա XVIII դարի գաղափարների հանդեպ և այդ ռեակցիան էր բովանդակությունն այն նոր շարժման, որ կոչվեց ռոմանտիզմ», գրում է նա:¹⁰ Ընդ որում, նոր մեթոդի կայացումը ևս բնորոշվեց որոշակի պատմական անցումային փուլերով՝ ֆեոդալական արիստոկրատիայի և մանր բուրժուազիայի՝ կորած անցյալի էլեգիան խորհրդանշող ռոմանտիկական ռեակցիայից մինչև առաջադիմական ռոմանտիզմ, որն իր զարգացման ընթացքում ձգտում էր «կամրջել երկու դարերը, վերականգնել կապը XVIII դարի գաղափարների հետ, որ խզել էր առաջին ռոմանտիկական ռեակցիան հեղափոխությունից անմիջապես հետո և վերափմաստավորել այդ գաղափարները պատմական նոր հանգամանքներում»:¹¹ Այդպիսով, Սարինյանը «դիալեկտիկական փոխանցման տրամագծի վրա» էր դիտում առաջավոր ռոմանտիզմը՝ գրական նախորդ դպրոցների /վերածնության ռեալիզմ, կլասիցիզմ, լուսավորական ռեալիզմ, սենտիմենտալիզմ ևև/ համեմատությամբ՝ հաստատելով, որ այն «ինչ-ինչ գիշումներով հանդերձ, սինթեզում է գեղարվեստական նախորդ մեթոդները և մի շարք գծերով խորացնում իրական-

⁹ Նույն տեղում, էջ 63:

¹⁰ Նույն տեղում, էջ 7:

¹¹ Նույն տեղում, էջ 10-11:

նության գեղարվեստական ընկալումները»:¹² Ուշագրավ է նաև աշխատության «Վերջաբան»-ում **մեթոդների սահուն անցումային փուլերի մասին** դատողությունը՝ կլասիցիզմից ռոմանտիզմ, ռոմանտիզմից ռեալիզմ՝ «դասական ռոմանտիզմի» կողքին տեղ տալով նաև «ուշացած ռոմանտիզմ» /Մուրացան/, «հոգեբանական ռոմանտիզմ», նեոռոմանտիզմ կամ ռոմանտիզմի և ռեալիզմի «սինթեզ» հասկացություններին՝ այդ մեթոդների «բաժանման» սահմանագծում / XIX դարի 80-ական թթ./:¹³

Մեթոդի պատմականության սկզբունքը, բնականաբար, պայմանավորում էր նաև գրականության պատմությունն ըստ դպրոցների ուսումնասիրելու գիտական համոզմունքը: Այս հարցում Սարինյանն անվերապահորեն հենվում էր Արսեն Տերտերյանի՝ «Համառոտ դասընթաց հայոց նոր գրականության» պրակում արտահայտած այն տեսակետի վրա, ըստ որի **«Մեր գեղեցիկ գրականությունը պետք է ուսումնասիրենք շկոլաներով**: Դա կարևոր է նախ՝ նյութի համակարգության և երկրորդ՝ գրական խնդիրների մասին հատուկ գաղափար տալու և կրկնողություններից խուսափելու համար»:¹⁴

Նկատելով, որ մինչև այժմ էլ կան դեռևս «վիճելի դրույթներ» և ըմբռնումներ ռոմանտիզմի մեթոդի «մի շարք առանցքային հարցերի գիտական լուսաբանության» վերաբերյալ /հատկապես կոնկրետ-պատմականության և տիպաբանական սկզբունքների շուրջ/, Սարինյանն անդրադառնում է նաև «ռոմանտիկայի և ռոմանտիզմի նույնացման» մերժելի միտումին, որը, նրա կարծիքով, «տեսական երերուն հիմքի վրա է դնում ռոմանտիզմի պատմականությունը և փաստորեն վերջինը զրկում է ինքնուրույն գոյությունից՝ տարրալուծելով այն ռեալիզմի մեջ»:¹⁵ Ընդ որում, գրականագետի գիտական ազնվության և սկզբունքայնության մասին է վկայում այն փաստը, որ նա չէր խուսափում նշել նաև որոշ հարցերի լուսաբանման մեջ ունեցած իր վրիպումներն ու բացթողումները: Այդպես, վերոհիշյալ խնդիրը քննելիս, նա հարկ է համարում խոստովանել, որ ինքը ևս մի ժամանակ՝ 1955 թ. լույս տեսած

¹² Նույն տեղում, էջ 12:

¹³ Նույն տեղում, էջ 523:

¹⁴ Ա. Տերտերյան, Համառոտ դասընթաց հայոց նոր գրականության, Ե., 1922, էջ 4:

¹⁵ Ս. Սարինյան, Հայկական ռոմանտիզմ, էջ 57:

«Քննադատական ռեալիզմի սկզբնավորումը հայ գրականության մեջ» գրքում, «XIX դարի գրական շարժումը» տեղադրել է ռեալիզմ-ռոմանտիզմ գուգահեռ սխեմայում, /.../ «վերջին հաշվով, գրականության առանցքագիծը» ենթարկելով «ռեալիզմի տրամաբանությանը»: Դա նա բացատրում է ժամանակի գործոնով՝ «ժամանակներն էին այդպես,- գրում է Սարինյանը,- ռոմանտիզմը չէր հնչում, անցյալի արվեստի գնահատման միակ չափանիշը ռեալիզմն էր և սա պարտադրում էր արհեստականորեն ռեալիստական ուղղության տակ առնել բոլոր այն գրողներին, որոնց ստեղծագործությունը գեղարվեստական ու ճանաչողական խոշոր արժեքներ էր պարունակում»: Սակայն անցել էր գրեթե մեկ տասնամյակ, խորհրդային գրականագիտությունը տեսական նոր մակարդակների էր հասել, ուրեմն և հարկ էր «վերանայել անցյալի որոշ դրույթներ և գիտական նոր մեկնաբանություն տալ գրականության պատմության հանգուցային հարցերին»:¹⁶

Արժանին մատուցելով Սո. Պալասանյանի «Պատմություն հայոց գրականության» աշխատությանը, որտեղ «առաջին անգամ, մեր գրականագիտության մեջ տրվում է ռոմանտիզմի ամենից ավելի ընդարձակ և գիտականորեն ըմբռնված լուսաբանությունը», Ս. Սարինյանը փաստորեն գիտական շրջանառության մեջ է դնում նաև Մանուկ Աբեղյանի «Գրական դպրոցներ» ուսումնասիրությունը». «Քիչ է հայտնի Աբեղյանի ուսումնասիրությունը,- գրում է նա,- այն համարյա դուրս է գրականագիտության տեսադաշտից, և, այսպես ասած, չի վավերացվել իր նշանակությամբ, բայց մենք պնդում ենք, որ իր բնույթով դա նոր երևույթ էր հայ գրականագիտական մտքի պատմության մեջ»: Ընդ որում, ըստ Սարինյանի, այդ աշխատության նշանակությունը ոչ միայն այն էր, որ տեսական հանրագումարի էր բերում նոր դարերի եվրոպական գրականության զարգացման օրինաչափություններն ու դպրոցները, այլև այն, որ «նրա հեղինակը փորձում է շարադրանքի ընդհանուր տրամաբանությանը համատեղել նաև հայ նոր գրականության զարգացման ուղիները ըստ դպրոցների՝ սկսած XYII դարից մինչև XIX դարի վերջը»:¹⁷

Այս խնդիրը չափազանց կարևոր էր ընդհանրապես հայ գրա-

¹⁶ Նույն տեղում, էջ 62:

¹⁷ Նույն տեղում, էջ 48:

կան-գրականագիտական մտքի կողմնորոշումների ճշգրտման տեսակետից: Վկայակոչելով Մ.Աբեղյանին, Սարինյանը ևս պաշտպանում էր այն տեսակետը, ըստ որի հայկական գրականագիտությունը գրական դպրոցների և գեղարվեստական մեթոդների տարբերակման, պարբերացման ու հիմնավորման հարցերում հետևել է եվրոպական, մասնավորապես, ֆրանսիական տեսական մտքին: «Աբեղյանը հետևողականորեն անց է կացնում այն տեսակետը, թե հայ գրականության զարգացումը ընթացել է նույն ուղեգծերով, ինչ եվրոպական գրականությունը», գրում է նա, մեջբերելով նաև Աբեղյանի՝ «Նոր-դար»-ի 1896 թ., թիվ 92-ում «Գրական դպրոցներ» հրապարակման այն միտքը, թե «ամբողջ Ասիայում միակն է հայ ազգը, որը հենց միջնադարի սկզբից հաղորդակից է եղել եվրոպական մտքին»:¹⁸ Հարցը 50-60-ական թվականներին քննության է դրվել նաև մեկ այլ, ավելի լայն՝ Արևմուտք-Արևելք համատեքստում: Ս. Սարինյանն այդ մասին հիշատակում է, մասնավորապես, Պարույր Սևակի հետ ունեցած իր գրույց-բանավեճերից մեկում: Պ. Սևակի այն մտքին, թե «Արևելքը զուցե և ինչ-որ երանգ տվել է մեր մշակույթին, բայց և զգալի չափով հասարակացրել է այն, /.../ սա կորուստ է...», նա հակադարձում է՝ «...**ճշգրտում է պահանջում հարցի դրվածքն ընդհանրապես:** Ես այն կարծիքն եմ հայտնում, որ այնքան էլ ճիշտ չէ հայ մշակույթի պատմությունը ենթարկել երկու քաղաքակրթությունների հաջորդափոխությանը, քանի որ նման ընդհատում ըստ էության տեղի չի ունեցել, և մենք մշտապես ունեցել ենք արևմտյան կողմնորոշում: Դրա ապացույցը մեր գրականության զարգացման ընթացքն է, որ ըստ դպրոցների հետևել է եվրոպական գրականության զարգացման օրինաչափություններին՝ կլասիցիզմ, ռոմանտիզմ, ռեալիզմ, սիմվոլիզմ՝ մի օրինաչափություն, որ բնորոշ չի եղել արևելքի գրականություններին: Այս իմաստով մենք հետևել ենք եվրոպական ստանդարտին, և մի որոշ պատմական անհամաչափությամբ հանդերձ, մեր զարգացումը, ինչպես ասում են, եղել է նորմալ»:¹⁹ Տասնամյակներ անց գրականագետն այս տեսակետը կրկնում է համաշխարհային գրականականագիտական

¹⁸ Նույն տեղում, էջ 49:

¹⁹ Ս. Սարինյան, «Պարույր Սևակը զուգահեռի վրա», Հայոց գրականության երկու դարը, Գիրք երկրորդ, Ե., Սով. գրող, 1989, էջ 79:

մտքի հետազոտման հիման վրա, սպառնիչ ձևակերպմամբ՝ **«մեր գրական-գեղարվեստական ազգային ոճը ձևավորվել է եվրոպական գրականության համաբնագրում»**:²⁰

Այս տեսական հիմնադրույթների տեսանկյունից էլ Սարինյանը որոշակի քննության է առնում Հայկական ռոմանտիզմի ծագումն ու զարգացման փուլերը, Աբովյանի, Ալիշանի, Պատկանյանի, Դուրյանի, Բաֆֆու ստեղծագործությունը:

Հատկանշական է Ս. Սարինյանի սկզբունքային, գիտական մոտեցումը գրականության վերլուծության սոցիոլոգիական մեթոդի եռության և նշանակության գնահատության հարցում: Անցյալ դարի երկրորդ կեսին այս հարցի կարևորությունը պայմանավորված էր նրանով, որ նշված մեթոդը զգալիորեն վարկաբեկվել էր խորհրդային առաջին տասնամյակներին լայն տարածում ստացած գռեհիկ սոցիոլոգիզմի պատճառով: «Գռեհիկ-սոցիոլոգիզմի մեթոդաբանական սահմանափակությունն առավել ցայտուն դրսևորվեց «Հայ նոր գրականության պատմության» երկրորդ հատորում /1933/, որը լույս տեսավ Դ.Սիմոնյանի, Հ.Գյուլիքեխյանի և Գ.Վանանդեցու խմբագրությամբ,- գրում է Ս. Սարինյանը: /.../ Իրականում դա ոչ թե գրականության պատմություն էր՝ գեղարվեստական զարգացման օրինաչափությունների, գրական դպրոցների պատմական ու տիպաբանական հետազոտությունների հիմքի վրա, այլ մի տեսակ հասարակական հոսանքների սխեմա՝ վերջինիս վրա գրողների ու գրական երևույթների մեխանիկական հարմարեցմամբ»:²¹ Չնայած ԽՄԿԿ 20-րդ համագումարից հետո այն հիմնականում հաղթահարվել էր և գրականագիտությունը ձերբազատվել որոշակի սխեմատիզմից, սակայն Սարինյանը նշում է, որ հետագա մի քանի տասնամյակներին «գրականագիտական միտքը, այնուամենայնիվ, որոշ նախապաշարմունք պահպանում էր սոցիոլոգիական մեթոդի հանդեպ: Գռեհիկ սոցիոլոգիզմի ծայրահեղությունները, պարզապես, ստեղծել էին հոգեբանական օտարում սոցիոլոգիա հասկացությունից»: Արժանին մատուցելով սոցիոլոգիական մեթոդը «գեղարվեստական վերլուծություն» կամ

20 Ս. Սարինյան, «Լերածություն», Հայոց գրականության պատմություն, հ. 3, Նոր շրջան, Ե., ՀՀ ԳԱԱ, Գիտություն հրատ., 2015, էջ 17:

21 Ս. Սարինյան, «Հայ գրականագիտությունը հիսուն տարում/պատմաքննական ուրվագիծ/», Քննադատությունը և գեղարվեստական զարգացումը, Եր., Հայաստան, 1973, էջ 311:

«Եւթետիկական քննադատություն» հասկացություններով փոխարինելու մի շարք գրականագետների միտումին, քանզի նրանք /Ս. Աղաբաբյան, Լ. Հախվերդյան, Ս. Արզումանյան և ուրիշներ/ այդպիսով «հասնում են գեղարվեստական երկի պոետիկական համակարգի, գրողի անհատականության և ստեղծագործական հոգեբանության խորակրկիտ վերլուծության», Սարինյանը, այնուամենայնիվ, պաշտպանում է նաև «գրական երևույթների պատմա-սոցիոլոգիական նստվածքները» պեղելու և գնահատելու սոցիոլոգիական մեթոդի կարևորությունը:²²

Մերգեյ Սարինյանի ներդրումը մեծ է նաև հայ գրականության, մասնավորապես, նոր շրջանի հայոց գրականության²³ **գիտական պարբերացման** խնդրում: «Հայոց գրականության պատմություն» վեցհատորյակի նոր շրջանն ընդգրկող երրորդ հատորի իր հեղինակած «Ներածության» մեջ, վկայակոչելով անցյալի մի շարք գրականության պատմաբանների /Ս. Սոմայան, Կ. Նեյման, Ստ. Նազարյան, Հ. Գաթըրճյան, Ստ. Պալասանյան, Գ. Չարբեհանալյան, Ե. Դուրյան, Ա. Չամիսյան, Լեո, Վրթ. Փափազյան, Հ. Օշական և ուրիշներ/, գրականագետը հավաստում է, թե «Հայոց գրականության դասական պատմագրության մեջ հայ նոր գրականության սկզբնավորման հարցի դրվածքը չի վիճարկվել այլազան կարծիքներով», այսինքն՝ այն գրեթե անվերապահորեն վերագրվել է «17-18-րդ դարերի սահմանագծին»: «Իսկ ահա անցյալ դարի 20-ական թվականներին,- շարունակում է Սարինյանը,- վավերացվեց և դպրոցական ու բուհական դասընթացներում գրանցվեց մի տեսակետ, ըստ որի՝ նոր գրականությունն սկզբնավորվել է 19-րդ դարասկզբին, և հիմնադիրը խաչատուր Աբովյանն է: Թե ինչպես, ով և ինչ ձևով կատարեց այդ փոխակերպումը, դժվար է ասել, սակայն կատարվել էր վրիպումը, և արդեն 1934-ին Թադևոս Ավդալբեկյանն իր տարակուսանքն է արտահայտում այս «համատարած մոլար» կարծիքի հանդեպ:²⁴ Գրականագետը նշում է, որ այնու-

22 Ս. Սարինյան, Քննադատությունը և գեղարվեստական զարգացումը, Եր., Հայաստան, 1973, էջ 355:

23 Հատկանշական է, որ Ս.Սարինյանը, հետևելով գրականության պատմաբանության ավանդույթին, ճիշտ էր համարում ոչ թե «հայ գրականություն», այլ «հայոց գրականություն» ձևակերպումը:

24 Ս. Սարինյան, «Ներածություն», Հայոց գրականության պատմություն, հ. 3, Նոր շրջան, էջ 5:

հետև՝ անցյալ դարի 60-ական թվականներին, հայոց նոր գրականության պատմության հինգհատորյակի ստեղծման առիթով, պարբերացման խնդիրը դրվել է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի քննությանը: Արդյունքում վավերացվել է մի որոշ տեղաշարժ՝ նոր շրջանի սկիզբը սահմանելով 18-րդ դարի կեսը՝ 1750 թվականը, սակայն առկախ են մնացել «մի շարք գրական-պատմական իրողություններ, որոնք անհամաչափություն էին ստեղծում դարաշրջանի գրական-գեղարվեստական տեսությունը գնահատելու հարցում»: Այդ ամենից ելնելով Ս. Սարիսյանը գտնում է, որ «ժամանակն է վերանայելու հարցի դրվածքը և առաջադրելու գիտականորեն հիմնավորված սահմանում, ավելի ստույգ՝ վերականգնելու ճշմարտությունը՝ ըստ գրականության դասական պատմագրության»: Եվ նա այդ խնդիրը լուծում է՝ հանգամանորեն անդրադառնալով, մասնավորապես, «երկու ականավոր բանագետների՝ Լեոյի և Մանուկ Աբեղյանի» աշխատություններին: Ընդ որում, եթե Լեոն ընդգծում էր նաև հարցի «պատմահասարակական կողմը, պատմական ֆորմացիաների անցման իրողությունը», Մ.Աբեղյանը երևույթը դիտում էր «պատմահասարակական և կրթալուսավորական նախապայմանների համապարփակ քննության տեսադաշտի վրա», սակայն, ըստ էության, երկուսն էլ հայոց նոր շրջանի գրականության սկզբնավորումը հատկացնում էին 17-րդ դարին:²⁵ Այդպիսով, նկատի ունենալով նաև Հակոբ Օջականի «Համապատկեր արևմտահայ գրականության» աշխատությունը և հայոց նոր գրականության պատմության հինգհատորյակը», Ս. Սարիսյանը եզրակացնում է, որ այլևս «**գիտականորեն հիմնավորված կարելի է համարել հայոց նոր շրջանի գրականության պարբերացման ստույգ տարբերակը**: 16-րդ դարն ավարտում է հայոց միջնադարը՝ գրականությունը եզրափակելով Նաղաշ Հովնաթանի տաղերգությամբ: Նոր շրջանը սկզբնավորվում է 17-րդ դարով՝ նշանավորելով գրականության պատմության մի ամբողջական էտապ՝ կազմավորման ու ծնավորման իր առանձնահատուկ գծերով, որ կարելի է անվանել «գրականության նորոգությունը 17-18-րդ դարերում մինչև 19-րդ դարի 20-ական թվականները»:²⁶

²⁵ Նույն տեղում, էջ 6:

²⁶ Նույն տեղում, էջ 17:

Հայ ժողովրդի պատմության ժամանակակից՝ նորագույն շրջանը, որ բնորոշվում էր Արցախյան ազգային-ազատագրական շարժման, հայության ազգային միասնության ամրապնդման, հայոց անկախ պետականության հաստատման հիմնարար իրադարձություններով, առանձնապես հրատապ դարձրեց նաև գրականության մեջ գաղափարի, իդեալի անհրաժեշտության, ավելի լայն առումով՝ ազգային գաղափարաբանության գիտականորեն սահմանման խնդիրը, որը, ինչպես հայտնի է, առիթ տվեց տարատեսակ մեկնաբանությունների: Պատահական չէ, որ հենց այդ շրջանում հրապարակ եկավ Սերգեյ Սարիսյանի «Հայ գաղափարաբանություն» աշխատությունը:²⁷ Գրականագետը խոստովանում էր, որ այդ հետազոտությունը **«հանկարծակի մտահղացման արդյունք չէ: Հայ գաղափարաբանությունը մշտապես եղել է գրականության պատմաբանի իմ գիտահետազոտական մտածումների առարկան»**, այդուհանդերձ, ծանոթ լինելով մտավորական /նաև պաշտոնական/ շրջանակներում շրջանառվող կարծիքներին ու տեսակետներին, ավելացնում էր, թե հավակնություն չունի «անթերի կամ անվիճելի ներկայանալու», սակայն պատրաստ է «ընդունելու բանավեճի ամեն մի հրավեր»:²⁸ Ս.Սարիսյանը սկզբունքային նշանակություն էր տալիս այդ աշխատությանը, քանի որ այն ընդգրկում էր պատմական մեծ ժամանակաշրջան՝ «XYIII դարասկզբից մինչև 1997 թ. դեկտեմբերը», բացի այդ՝ նոր էին «թե՛ առարկան, թե՛ պարբերացումը և թե՛ գաղափարների համակարգը»:²⁹

Նախ և առաջ գրականագետը սահմանում է, որ հակառակ մի որոշակի տեսակետի, «Ազգային գաղափարաբանությունը **իրական** հասկացություն է և **գիտականորեն** միանգամայն ճանաչելի»:³⁰ Այն հարաբերական է ազգային ոգուն, ըստ էության՝ ոգու արտածումն է գիտակցության մեջ: Ավելի լայն իմաստով՝ «...ազգային գաղափարաբանությունը տվյալ ազգի պատմության փիլիսոփայությունն է, ազգի մտավոր գործունեության ամբողջ փորձի տեսական համադրությունը՝ գիտական, գեղարվեստական, բա-

27 Ս. Սարիսյան, Հայ գաղափարաբանություն /պատմաքննական տեսություն/, Եր., Չանգակ-97, 1998:

28 Նույն տեղում, էջ 306:

29 Նույն տեղում, էջ 2:

30 Նույն տեղում, էջ 3:

11 208542

նահյուսական, կրոնական և այլն»:³¹ Սակայն ազգային գաղափարաբանության՝ իբրև գիտական հասկացության, բովանդակությունը խարսխվում է որոշակի պատմական շրջանի: Ահա թե ինչու, թեև Հայկի և Բելի առասպելի առնչությամբ, Սարինյանը խոսում է «ազգային գաղափարաբանության **նախապատմության**» մասին, բայց նաև որոշակիորեն ընդգծում, որ **«առասպելին վերագրել ազգային ազատագրական գաղափարաբանություն՝ պարզապես հակագիտական է»**, քանզի՝ «Գաղափար հասկացությունն իբրև հասարակական գիտակցության վերացարկում, անհամատեղելի է դիցաբանական մտածողության հետ»: Նույն կերպ՝ **«Ճիշտ է միջնադարյան հայոց աշխարհայացքին վերագրել ազգային կամ հայկական գաղափարաբանություն՝ որպես վերջավորված գիտակցական պատմափիլիսոփայություն»**, քանի որ այդ շրջանում հայոց «աշխարհայեցողության կառույցը բնախոսական էր, միացնող գաղափարը քրիստոնեությունն էր, արարչության աստվածաբանական սկիզբը: Ելակետը մարդկությունն էր՝ որպես տիեզերական միավոր, բայց ոչ ազգությունը՝ որպես հասարակության ընդհանրություն»: Պատմաքննական այս հիմքի վրա միանգամայն տրամաբանական է ինչու՞մ գրականագետի եզրահանգումը, որ «սկզբնավորվելով 17-18-րդ դարերի սահմանագծում, հայ գաղափարաբանությունն անցել է շուրջ երեք հարյուրամյա պատմություն, առաջադրելով ազգի քաղաքական, սոցիալական, մշակութային զարգացումներն ուղենշող տեսություններ, որոնք համակարգում են հայոց պատմության փիլիսոփայությունը»:³² Եվ ապա՝ «...կա միացնող մի ոգի, որ կարգավորել է գիտության բոլոր /.../ ձևերի աշխարհայացքային հղումները: Դա ժամանակի առաջադրած գաղափարն է, կյանքի փիլիսոփայությունը: Ահա **հատման այս կետում է հայ միտքն արտածել ազգային գաղափարաբանություն կոչված երևույթը**՝ պատասխան տալու ազգի գոյության կենսական հարցերին, թե ով է ինքը, որտեղից է գալիս և ուր է գնում»:³³

Սարինյանի գրիչը հրապարակախոսական կրքոտություն է ձեռք բերում, երբ անդրադառնում է Ղարաբաղյան շարժման,

31 Նույն տեղում, էջ 4:

32 Նույն տեղում, էջ 5:

33 Նույն տեղում, էջ 306:

Հայաստանում ազգային պետականության հաստատման կոնցեպտուալ հարցերին, Լ. Տեր-Պետրոսյանի, Լ. Խուրշուդյանի, 2. Բալայանի և ուրիշների բանավիճային տեսակետների քննության արդյունքում եզրակացնելով, թե «Գաղափարախոսությունն անշատել պատմությունից՝ միևնույն է թե հասկացությունը զրկել փիլիսոփայությունից և հումանիտար ազգային սկզբունքը զոհաբերել քաղաքական պրագմատիզմին»: Նա համոզված էր, որ «... **պետության կայացման համար անհրաժեշտ է միավորող գաղափարախոսություն. ավելի կոնկրետ՝ ազգային գաղափարախոսություն...**»:³⁴

Ս. Սարինյանը «գիտական քննության» արժանի է համարում այն խնդիրը, «թե **ինչպիսի աստիճաններ է անցել հայոց քաղաքական գիտակցությունը և թե ինչքանով է այդ փորձը հաղորդելի արդի մեր պետականության ձևավորմանը**»: ³⁵ Այս առումով բանավիճելով այն տեսակետների դեմ /4. Սարդարյան, Վ. Դավթյան/, թե մենք չենք ունեցել ազգային պետական գիտակցություն, թե «մեր պատմության խորհրդի հորինված անքննելիությունը սերտորեն կապված է պատմության ընթացքը տիրապետելու ներքին անկարողության և կոլեկտիվ անպատասխանատվության հետ», որի պատճառով էլ «մեր պատմությունը կատարելապես զուրկ է եղել իրատեսական ուղեցույցից և մշտապես դեգերել է մոլորությունների ու տարերայնության ծանծաղուտներում», նա գրում է, թե դրանք «ոչ թե գիտական, այլ տպավորապաշտական» ընկալումների արդյունք են: Ըստ նրա, ընդհակառակը՝ «**Մենք ապրել ենք մեր պատմությունը և գիտակցել ենք մեր պատմությունը**»: Մենք պատմություն ենք կառուցել և մեր ժողովրդի պատմությունը բովանդակավորել ենք ֆիզիկական ու հոգևոր ստեղծումներով. ստեղծումներ, որ կարող է ունենալ միայն կենսունակ ազգը, ֆիզիկապես ու հոգեպես կայուն ազգը»: Ինչ վերաբերում է «ողբի գրականությանը», ինչին ակնարկում էին ընդդիմախոս հեղինակները, պնդելով, թե «ինչ-որ «հայկական տոլստոյականություն» ընկճել է մեր ոգին, մեր հոգեբանության վրա դրոշմել վախի, անվստահության, վիատության, ողբի ու լավկանության հավիտենական անեծքը», ապա Սարինյանը տեղին է

34 Նույն տեղում, էջ 276:

35 Նույն տեղում, էջ 279:

համարում հիշեցնել, որ **«ողբերգությունը որպես ոգու սուբստանց, յուրահատուկ է միայն ինտելեկտուալ բարձր զարգացում ունեցող ժողովրդի գիտակցությանը**, բայց ոչ երբեք խաշնարած ցեղախմբի հովվերգական աշխարհազգացողությանը: Ուստի խորենացու, Նարեկացու, Աբովյանի, Չարենցի ողբը ոչ թե մեղկության ու ոչնչության ճիգեր են, այլ ազգային ոգու ծգտումը կատարելության: Եվ այդ ծգտումը, **մաքառման ու լինելության ոգու հարատև շարժումը արտացոլված է մեր ազգային էպոս «Սասնա ծռերում», որը մեր պատմության փիլիսոփայության ավետարանն է»**:³⁶

Նորագույն ժամանակների մարտահրավերներին դիմակայելու ունակության ամրապնդման տեսակետից, շատ կարևոր է Ս. Սարիսյանի այն հաստատումը, թե «Հայոց ազատագրական շարժումը և անկախ պետականության ստեղծումը միաժամանակ նշանավորեցին մի ուրույն հոգևոր հեղափոխություն, որի բովանդակությունը կարելի է անվանել **ազգային միասնության գիտակցում**»: Այս տեսակետից նա առաջնային նշանակության խնդիրներից էր համարում «հայրենիք-սփյուռք հարաբերությունների ըմբռնումը»: Մի խնդիր, որը դարձյալ առիթ էր տվել տարբեր անդրադարձումների՝ մասնավորապես, հղյվվելով **«Մի ազգ- մի եկեղեցի - մի մշակույթ»** դրույթի շրջանակներում, որը, սակայն, ըստ գրականագետի, «բնավ էլ առանց անհայտի պարզ հավասարում չէ» և բնորոշվում է ներքին բարդությամբ:³⁷ Այնուհետև բանավիճելով Ալ. Կոստանյանի, Զ.Գազանճյանի, Վ.Օշականի, Գր. Պըլտյանի **«մի ազգ. երկու գրականություն»** /քանզի, ըստ ընդդիմախոսների, «արևմտահայ մշակույթը ընթացել է արևմտականացման ուղիով, իսկ արևելահայկականը տակավին չի հաղթահարել այդ անցումը»՝ մնալով արևելյան/, «Սփյուռքի և Հայրենիքի ընդհանրությունը կարող է կայանալ Արևմուտքի մեջ», «Հայրենիքը և Սփյուռքը ուրույն մշակութային կառույցներ են, որոնց ինքնությունը ընդունելի է միայն զուգահեռի վրա», «Հայրենիքը և Սփյուռքը ինքնորոշվում են որպես առանձին մոլորակներ՝ /.../ ձև տալիս ազգային գոյության **«երկկեդրոն մոդելի»** և այլ նմանատիպ մոդելի ու կարծիքների հետ, Ս. Սարիսյանը շարադրում է իր

36 Նույն տեղում, էջ 282-283:

37 Նույն տեղում, էջ 285-286:

հստակ համոզմունքները: Ընդունելով դարերի ընթացքում ժողովուրդների «եթնիկական տեղաշարժերի» իրողությունը, նա միաժամանակ շեշտում է, որ «անտեսել այդ տեղաշարժերի սոցիալ-պատմական բարդ պարտադրումները, և **բանը հանգեցնել արևմտականացման ոգու որոնումներին**, մոռանալով, որ /.../ հայ ժողովուրդն այսօր գոյապահպանության ու ազգային կոնսոլիդացիայի առավել կենսական մաքառումներ ունի, քան «արևմտականանալու» պատրանքը, պարզապես հասարակամտություն է», իսկ ինչ վերաբերում է **«երկկեդրոնության» տեսությանը**, որի այլաբանությունը ենթադրում է հայրենիքի հոգևոր ենթակայությունը Սփյուռքին, քանզի վերջինս արևմտականացման խորհրդանիշ է, ապա դա «հովվերգության ճյուղին պատկանող» մտավոր զբաղմունք է, որ **արժանի չէ քննաբանության**»: Ընդհանրացնելով խնդրի վերաբերյալ իր տեսակետը, գրականագետը եզրակացնում է. **«Սփյուռքը ռեալություն է և ռեալություն է թե քաղաքական և թե մշակութաբանական տեսակետից: Այս իմաստով Հայրենիք-Սփյուռք հարաբերությունը մեր ազգային կացության էական խնդիրներից մեկն է:** Բայց այդ հարաբերակցությունը ազգի գոյության հեռանկարի տեսակետից ենթակա է բացարձակ ճշմարտության օրենքին, որի հանդեպ **«սփյուռքացումն» իբրև ազգային-քաղաքական ուղեգիծ միանգամայն անընդունելի է: Մեր ազգային գոյության ձգտումը միակենտրոնությունն է**, հայության հավաքականությունը, Հայ դատը, հայրենիքի միավորումը և անկախ պետականությունը: **Միակենտրոնության առանցքը Հայաստանն է, որի հանդեպ Սփյուռքը ենթակայական է՝ թե մշակութաբանական և թե ազգային-քաղաքական անհրաժեշտությամբ**»:³⁸

Մի առիթով Սերգեյ Սարիսյանը գրել է. «... իմ ստեղծագործական լաբորատորիայում **ես երբեք չեմ անջատել գրականագիտությունը քննադատությունից**. չեմ անջատել ոչ թե տարերային ներհայեցողությամբ, այլ որ նրանց նույնականությունն ու մեթոդոլոգիական ընդհանրությունը ինձ համար ըմբռնելի է թե՛ տեսական դրվածքով և թե՛ հոգեբանորեն»:³⁹ Սկզբունքային նման կողմնորոշումը, ինչպես նաև մտածողության վերը նշված որակ-

³⁸ Նույն տեղում, էջ 292-293:

³⁹ Ս. Սարիսյան, Հայոց գրականության երկու դարը, Գիրք առաջին, էջ 3:

ները հնարավորություն են տվել բազմափորձ գրականագետին ճիշտ կողմնորոշվելու նաև ժամանակակից գրական ընթացքի բավիղներում: Մասնավորապես, վերջին տարիների իր հոդվածներում ու հարցազրույցներում նկատելու և ահագանգելու գրական քննադատության «ակնհայտ ճգնաժամի»՝ համակարգի քայքայման, «շկոլայի» անհետացման, գիտական մակարդակի, «մտքի ռեժիմի» վերացման փաստերը, մտահոգվելու այն իրողությամբ, որ «այժմ մեթոդ կատեգորիան գրեթե չի գիտակցվում»: Ինչ վերաբերում է արդի գրականությանը, ապա Սարինյանի համոզմամբ՝ «Գրականության ժամանակը բնավ ճգնաժամային չէ...», ստեղծվում են նոր արժեքներ՝ նոր մոտեցումներով ու ձևերով, տեղի է ունենում գրական սերունդների բնական հերթագայություն՝ ավանդների նորոթյա յուրացումներով, միայն թե՛ պետք է կարողանալ ճիշտ վերլուծել, գնահատել այդ ամենը, ընդ որում առանց «գտելու գրական պրոցեսը», հաշվի առնելով գրական ընթացքի բոլոր նրբություններն ու բարդությունները:⁴⁰

Գրական-գիտական որոշ շրջանակներում Սերգեյ Սարինյանի մտածողությունն ու ոճը երբեմն բարդ է համարվել: Սակայն, կարծում ենք, շատ ավելի ճշգրիտ էր Պարույր Սևակը, երբ «ի ծնե ակադեմիկոս- գրականագետի» /Հր.Մաթևոսյան/ մտածողության եղանակը որակում էր՝ «ըստ հարկի **բարդ, բայց ոչ երբեք խորին**», ընդգծելով նաև նրա հայացքի թափանցողությունն ու խորքը՝ «Ոմանք /ըստ ծանոթ առածի/ ծառերի ետևում չեն տեսնում անտառը, իսկ Սարինյանը գերազանց **անտառատես է**»:⁴¹

Ակնհայտ է, որ անհատականության նշված որակները ձեռք էին բերվել գրականագետի տասնամյակների հարուստ փորձով, հայ և համաշխարհային գրական-գիտական, իմաստասիրական մտքի լավագույն ավանդույթների խորքային յուրացմամբ, ինչը և նրա վաստակը բարձրացնում է դասականության աստիճանի:

ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ
Բանաս. գիտ. դոկտոր

⁴⁰ Ս. Սարինյան, Հայոց գրականության երկու դարը, Գիրք երրորդ, Չանգակ-97, 2002, էջ 563, Գիրք չորրորդ, էջ 37:

⁴¹ Ս. Սարինյան, Հայոց գրականության երկու դարը, Գիրք երկրորդ, էջ 58:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՍԵՐԳԵՅ ՆԵՐՍԵՍԻ ՍԱՐԻՆՅԱՆ
/1924, ՆՈՅԵՄԲԵՐԻ 17 - 2017, ՀՈՒՆԻՍԻ 8 /**

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայ գրականագետ - քննադատ, գրականության պատմաբան և տեսաբան: Բանասիրական գիտությունների դոկտոր /1967/, պրոֆեսոր /1970/, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ /1990 /, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս /1996/: ՀՍՍՀ Պետական մրցանակի դափնեկիր / «Հայ Նոր գրականության պատմություն» հինգհատոր կոլեկտիվ աշխատության համար, 1980/: ՀՀ Նախագահի մրցանակակիր /2005/: ԽՍՀՄ և Հայաստանի Գրողների միության անդամ 1957 թվականից, ԼՂՀ ԳՄ անդամ, ԽՄԿԿ անդամ 1948 թվականից:

Սերգեյ Ներսեսի Սարինյանը ծնվել է 1924թ. Նոյեմբերի 17-ին Լեռնային Ղարաբաղի Ասկերանի շրջանի Սեյտիշեն /այժմ Խաչեն/ գյուղում:

1930 -1937թթ. սովորել է գյուղի յոթնամյա դպրոցում: 1941թ. ավարտել է Խնձրիստանի միջնակարգ դպրոցը՝ գերազանցության վկայականով և հայրենի գյուղի թերի միջնակարգ դպրոցում աշխատել է որպես ուսուցիչ:

1942թ. օգոստոսին զորակոչվել է Խորհրդային բանակ, մասնակցել Հայրենական պատերազմին՝ Հյուսիս - կովկասյան ռազմաճակատում 165-րդ հրետանային գնդում:

Վերավորվել է 1943թ. փետրվարի 28-ին և ամիսների հոսպիտալային բուժումից հետո 1943թ. Նոյեմբերին ազատվել է զինծառայությունից:

1944 -1949թթ. սովորել է Երևանի Պետական համալսարանի լեզվագրական ֆակուլտետում և ավարտել այն գերազանցության դիպլոմով:

1949 -1952թթ. սովորել է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրայում:

1953թ. «Քննադատական ռեալիզմի սկզբնավորումը հայ գրա-

կանության մեջ» թեմայով պաշտպանել է ատենախոսություն և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: !

1952 - 2017թթ. աշխատել է Գիտությունների ազգային ակադեմիայի գրականության ինստիտուտում՝ որպես կրտսեր, ավագ և առաջատար գիտաշխատող:

1960 - 2016թթ. Գրականության ինստիտուտում եղել է Հայ նոր գրականության բաժնի վարիչը:

1967թ. «Հայկական ռոմանտիզմ» թեմայով պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, և սրան շնորհվել է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

1970թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում:

1968թ. Հայրենական պատերազմում ցուցաբերած արիության համար պարգևատրվել է «Մարտական ծառայությունների համար» շքանշանով, 1980թ. «Անձնվեր աշխատանքի համար» և 1985թ. «Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի» շքանշաններով:

Հեղինակակից է Մոսկվայում 1976թ. ռուսերեն հրատարակված «Հայ գրականություն» դասընթացի:

Սերգեյ Սարինյանի առաջաբանով և ծանոթագրություններով «Բիբլիոտեկա պոետա» /«Библиотека поэта»/ մատենաշարով 1980թ. Լենինգրադում տպագրվել է Վահան Տերյանի «Բանաստեղծություններ» գիրքը:

1980թ. ստացել է ՀՍՍՀ Պետական մրցանակ «Հայ նոր գրականության պատմություն» հինգհատոր կոլեկտիվ աշխատության համար՝ որպես հատորների ընդհանուր խմբագիր և գիտական ղեկավար:

1985թ. արժանացել է ՀՍՍՀ Գիտության վաստակավոր գործչի կոչման:

1990թ. ընտրվել է Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ:

1996թ. ընտրվել է Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս:

1994 - 2011թթ. դասավանդել է Հայ գրականություն «Հրաչյա Աճառյան» համալսարանում և ղեկավարել Հայ գրականության

ամբիոնը:

2005թ. ստացել է Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակ «Հայոց գրականության երկու դարը» բազմահատորյակի չորրորդ հատորի համար:

2012 - 2016թթ. դասախոսել է Խ. Աբովյանի անվան Պետական մանկավարժական համալսարանի մագիստրատուրայում՝ «Պատմավեպի ծագումը, տեսությունը, պատմությունը: Հայ դասական պատմավեպը» դասընթացով:

2000 - 2017թթ. /կարճ ընդմիջումով/ եղել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտին կից գիտական կոչումներ շնորհող Գրականագիտություն 003 մասնագիտական խորհրդի նախագահ:

Գիտական ղեկավար է եղել երկու տասնյակից ավելի ասպիրանտների:

Ուներ որդի և դուստր: Որդին՝ Արտակը, մասնագիտությամբ բժիշկ, մահացել է 2011թվականին: Դուստրը՝ Մանե Սարինյանը, բանասիրական գիտությունների թեկնածու է, դասավանդում է Հայ - ռուսական /սլավոնական/ համալսարանում և աշխատում Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում:

Կինը՝ Մավրինա Ռոստոմյան - Սարինյանը, մասնագիտությամբ ֆիզիկոս, մահացել է 1978 թվականին:

2018թ. Արցախում՝ Ասկերանի շրջանի հաչեն գյուղում, բացվել է ակադեմիկոսներ Սերգեյ Սարինյանի և Սևակ Արզումանյանի անվան թանգարան:

2018թ. Ստեփանակերտի Գրիգոր Նարեկացի համալսարանի գրադարանը անվանակոչվել է Սերգեյ Սարինյանի անունով:

ՊԱՐԳԵՎՆԵՐԸ ԵՎ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ

- «Մարտական ծառայությունների համար» շքանշան / Հայրենական պատերազմում ցուցաբերած արիության համար //1968/

- «Անձնվեր աշխատանքի համար» շքանշան /1980/

- ՀՍՍՀ Պետական մրցանակի դափնեկիր /1980/

- Գիտության վաստակավոր գործչի կոչում /1985/

- «Հայրենական պատերազմի II աստիճանի» շքանշան /1985/

- Միքայել Նալբանդյանի անվան մրցանակ /1986/

- «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան /2004/

- ՀՀ Նախագահի մրցանակ /«Հայոց գրականության երկու դարը» գրքի 4-րդ հատորի համար //2005/

- «Մովսես Խորենացի» մեդալ /2009/

- «Վաչագան Բարեպաշտ» մեդալ /ԼՂՀ//2011/

- «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալ /2011/

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀԻՄՆԱՐԱՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հայ նոր գրականության պատմություն: Հինգ հատորով: Հ.
1: - /Ընդհանուր գիտական ղեկավարությամբ և խմբագրությամբ՝
Ս. Ն. Սարինյանի /: - Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1962:

2. Հայ նոր գրականության պատմություն: Հինգ հատորով: Հ.
2: - /Ընդհանուր գիտական ղեկավարությամբ և խմբագրությամբ՝
Ս. Ն. Սարինյանի/: /Գլուխ ութերորդ՝ «Այլ արձակագիրներ»՝ Ս.
Սարինյանի /: - Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1962:

3. Հայ նոր գրականության պատմություն: Հինգ հատորով: Հ.3:
- /Ընդհանուր գիտական ղեկավարությամբ և խմբագրությամբ՝
Ս. Ն. Սարինյանի/: /«Ներածություն»-ը, «Պերճ Պոռչյան», «Րաֆ-
ֆի», «Սրբուհի Տյուսաբ» գլուխները՝ Ս. Սարինյանի/: - Երևան,
ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1964:

4. Հայ նոր գրականության պատմություն: Հինգ հատորով: Հ.
4: - /Ընդհանուր գիտական ղեկավարությամբ և խմբագրությամբ՝
Ս. Ն. Սարինյանի/: /«Ներածություն»-ը,

«Մուրացան» գլուխը՝ Ս. Սարինյանի/: - Երևան, ՀՍՍՀ ԳԱ
հրատ., 1972:

5. Հայ նոր գրականության պատմություն: Հինգ հատորով: Հ.
5: - /Ընդհանուր գիտական ղեկավարությամբ և խմբագրությամբ՝
Ս. Ն. Սարինյանի/: /«Ատոմ Յարճանյան - Սիամանթո», «Վահան
Տերյան» գլուխները՝ Ս. Սարինյանի/: - Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.,
1979:

6. Հայ քննադատության պատմություն: Երկու հատորով: Հ.
1: - /Ընդհանուր գիտական ղեկավարությամբ և խմբագրությամբ՝
Ս. Ն. Սարինյանի/: /«Ներածություն»-ը, «Գրական քննադա-
տությունը 19-րդ դարի 70 - 80 -ական թվականներին», «Րաֆ-

ֆին քննադատ» գլուխները՝ Ս. Սարիսյանի/։ - Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985:

7. Հայ քննադատության պատմություն: Երկու հատորով: Հ. 2: - /Ընդհանուր գիտական ղեկավարությամբ և խմբագրությամբ՝ Ս. Ն. Սարիսյանի/։ /Հատորի առաջին մասի՝ «Քննադատությունը 19-րդ դարի 90 -ական թվականներին», «Ներածություն» -ը, երկրորդ մասի՝ «Գրական քննադատությունը 1900 -1910 -ական թվականներին», «Ներածություն»-ը և «Քննադատությունը «Մեհյան» և «Նավասարդ» հանդեսներում» գլուխը՝ Ս. Սարիսյանի/։ - Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 1998:

8. «Հայ վեպի պատմություն» /19-րդ դար/։ - /Ընդհանուր խմբագրությամբ՝ Ս. Ն. Սարիսյանի/։ /Ներածությունը՝ «Վեպի պատմության և տեսության հարցեր. Հայ վեպի պատմական ուղին», «Խաչատուր Աբովյանի «Վերջ Հայաստանի» վեպը», «Պերճ Պռոշյան», «Հակոբ Պարոնյան», «Բաֆֆի /Հակոբ Մելիք -Հակոբյան/», «Մուրացյան», «Լևոն Շանթ» գլուխները՝ Ս. Սարիսյանի/։ - Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2005:

9. Հայոց գրականության պատմություն: Հ. 3: - /Ընդհանուր խմբագրությամբ՝ Ս. Ն. Սարիսյանի/։ /«Ներածություն»-ը, «Գրականության նորոգությունը 17-18 -րդ դարերում», «Սայաթ-Նովա» գլուխները, «19-րդ դարի 30 - 40-ական թվականներ» բաժնի «Ներածություն»-ը, «Խաչատուր Աբովյան» գլուխը, «19-րդ դարի 50 - 60-ական թվականներ» բաժնի «Ներածություն»-ը, «Գեղարվեստական արձակը» գլուխը, «19-րդ դարի 70 - 80 -ական թվականներ» բաժնի «Ներածություն»-ը, «Պերճ Պռոշյան», «Բաֆֆի» գլուխները՝ Ս. Սարիսյանի, «Գեղարվեստական արձակը»՝ Կ. Դանիելյան, Ս. Սարիսյանի/։ - Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2015:

10. Կազմել է «Հայոց գրականության պատմության» չորրորդ հատորի պլանը, գրել է հատորի առաջին մասի առաջաբանը՝ «Գրականությունը 1885 - 1905 թվականներին», հատորի երկրորդ մասի առաջաբանը՝ «Գրականությունը 1905 - 1920 թվականներին»:

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. **Քննադատական ռեալիզմի սկզբնավորումը հայ գրականության մեջ:** /Մենագրություն/: - Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1955, 273 էջ:

2. **Բաֆֆի:** /Մենագրություն/: - Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1957, 360 էջ:

3. **Գրական դիտողություններ:** /Հոդվածների ժողովածու՝ նվիրված 19-րդ դարի վերջի և սովետահայ գրականության պատմության և տեսության հարցերին/: - Երևան, Հայպետհրատ, 1964, 297 էջ:

4. **Հայկական ռոմանտիզմ:** /Մենագրություն/: - Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1966, 556 էջ:

5. **Армянский романтизм.** Автореферат диссертации на соискание ученой степени доктора филологических наук. - Ереван, АН Арм. ССР, Институт им. М. Абеяна, 1967, 92 с.

6. **Քննադատությունը և գեղարվեստական զարգացումը:** /Հոդվածների և ուսումնասիրությունների ժողովածու/: - Երևան, «Հայաստան», 1973, 362 էջ:

7. **Армянская литература.** /Учебное пособие для студентов филологических специальностей университетов и педагогических институтов/. - В. С. Налбандян, С. Н. Саринян, С. Б. Агабабян. /Второй раздел - «Новоармянская литература» - С. Н. Саринян, с. 156-353/. - Москва, «Высшая школа», 1976.

8. **Մուրացան. Տիպաբանությունը, էթիկան, պատմության փիլիսոփայությունը:** /Մենագրություն/: - Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1976, 329 էջ:

9. **Գեղարվեստական գրականության պատմականությունը:** /Գրականագիտական հոդվածների և ուսումնասիրությունների ժողովածու/: - Երևան, «Սովետական գրող», Երևան, 1979, 362 էջ:

10. **Սերունդներ և ավանդներ:** /Գրականագիտական հոդվածների և ուսումնասիրությունների ժողովածու/: - Երևան, «Սովետական գրող», 1984, 415 էջ:

11. **Բաֆֆի. Գաղափարների և կերպարների համակարգը:** /Մենագրություն/: - Երևան, «Սովետական գրող», 1985, 298 էջ:

12. **Հայոց գրականության երկու դարը: Գիրք 1:** /Գրականագիտական հոդվածների և ուսումնասիրությունների ժողովածու/: - Երևան, «Սովետական գրող», 1988, 535 էջ:

13. **Հայոց գրականության երկու դարը: Գիրք 2:** /Գրականագիտական հոդվածների և ուսումնասիրությունների ժողովածու/: - Երևան, «Սովետական գրող», 1989, 567 էջ:

14. **Լևոն Շանթ:** /Մենագրություն/: - Երևան, «Նաիրի» հրատ., 1991, 280 էջ:

15. **Բանաստեղծի հայտնությունը:** /Վարդան Հակոբյանի բանաստեղծություններին նվիրված հոդվածներ/: - Ստեփանակերտ, ԼՂՀ, «Արցախ» հրատ., ԼՂՀ «Գրիգոր Նարեկացի» համալսարան, 1998, 60 էջ:

16. **Հայ գաղափարաբանություն: Պատմաքննական տեսություն:** /Մենագրություն/: - Երևան, 1998, «Չանգակ - 97», 318 էջ:

17. **Հայոց գրականության երկու դարը: Գիրք 3:** /Գրականագիտական հոդվածների և ուսումնասիրությունների ժողովածու/: - Երևան, «Չանգակ - 97», 2002, 651 էջ:

18. **Հայոց գրականության երկու դարը: Գիրք 4:** /Գրականագիտական հոդվածների և ուսումնասիրությունների ժողովածու/: - Երևան, «Չանգակ - 97», 2004, 636 էջ:

19. **Մուրացան. տիպաբանությունը, էթիկան, պատմության փիլիսոփայությունը:** /Մենագրություն/: 2-րդ հրատարակություն: - Երևան, «Հայաստան», 2004, 247 էջ:

20. **Հայոց ազգային գաղափարաբանություն: Պատմաքննական տեսություն:** /Մենագրություն/: 2-րդ լրամշակված հրատարակություն: - Երևան, «Չանգակ - 97», 2005, 328 էջ:

21. **Պարույր Սևակ. Բանաստեղծության գիտությունը:** /Հուշեր, գրականագիտական հոդվածներ/: - Երևան, «Հայաստան», 2006, 206 էջ:

22. **Ի հեճուկս. Հուշերի երկրի առասպելը:** - Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ», 2006, 350 էջ:

23. **Ծարունակվող լեգենդ: Продолжающаяся легенда.** /Մենագրություն/ /2-րդ Բալայանի ստեղծագործության վերլուծությամբ/

յուն/։ - Երևան, «Ամարաս», 2008, 330 էջ։ /Բնագիրը գուճահեռ՝ հայերեն և ռուսերեն/։

24. **Հայոց գրականության երկու դարը։ Գիրք 5։** /Գրականագիտական հոդվածների և ուսումնասիրությունների ժողովածու/։ - Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս» հրատ., 2009, 551 էջ։

25. **Ապաշխարանք և թողություն։** /Գրականագիտական աշխատություն Չորի Բալայանի «Հաղթելով մահին» գրքի մասին/։ - Երևան, «Ամարաս», 2010, 192 էջ։ /Բնագիրը գուճահեռ՝ հայերեն և ռուսերեն/։

26. **Ըաֆֆի. Գաղափարների և կերպարների համակարգը։** /Մենագրություն/։ 2-րդ հրատարակություն։ - Երևան, ՀԳՄ հրատ., 2010, 288 էջ։

27. **Հայոց գրականության երկու դարը։ Գիրք 6։** /Գրականագիտական հոդվածների և ուսումնասիրությունների ժողովածու/։ - Երևան, «Վաչագան Բարեպաշտ», 2015, 487 էջ։

28. **Հայտնության խորհուրդը կամ բանաստեղծության փիլիսոփայությունը։** /Վարդան Հակոբյանի ստեղծագործության գիտական վերլուծություն/։ - Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ», 2016, 181 էջ։ /Բնագիրը գուճահեռ՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն/։

29. **Ի հեճուկս. ի գիտություն։** - Երևան, «Վան Արյան», 2016, 54 էջ։

30. **Հայոց գրականության երկու դարը։ Գիրք 7։** /Գրականագիտական հոդվածների և ուսումնասիրությունների ժողովածու/։ - Երևան, «Արմավ», 2018, 258 էջ։

ԴԱՍԱԳՐԵՐԸ

- Հայ գրականություն։ Դասագիրք հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի համար։ Հ. Բախչինյան, Ս. Սարինյան։ - Երևան, «Լույս», 1993։ Վերահրատարակվել է 1996 թվականին։

- Հայ գրականություն։ 9-րդ դասարան։ /Դասագիրք/։ Հ. Բախչինյան, Ս. Սարինյան, Հ. Թամրազյան։ - Երևան, «Լույս», 2000։

Վերահրատարակվել է 2003, 2004, 2005, 2006, 2007 թվականներին:

- Հայ գրականություն 10: /Հումանիտար հոսք/: /Դասագիրք/: Հ. Բախչիլյան, Ս. Սարինյան: - Երևան, «Արևիկ», 2009: Վերահրատարակվել է 2014 թվականին:

ՀՈԴՎԱԾՆԵՐ, ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԳՐՔԵՐԻ ԱՌԱՋԱԲԱՆՆԵՐ, ՎԵՐՋԱԲԱՆՆԵՐ, ՀԱՐՑԱԶՈՐՈՒՅՑՆԵՐ, ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Սխալ ելակետից:** /Անդրադարձ քննադատ Վ. Ղազանջյանի Բագրատ Ստաֆֆու «Փորձություն» վեպի գրախոսությանը/: - Վահագն Մկրտչյան, Սերգեյ Սարինյան: - Գրական թերթ, Երևան, 1951, 28 փետրվարի, թ. 8:

2. **Մի ձախողված երկի մասին:** /Գրախոսություն/ /Գևորգ Պետրոսյանի «Թիկունքում» վեպի մասին/: - Սովետական գրականություն, Երևան, 1952, թ. 6, էջ 146-150:

3. **«Արևը Սանգան գետի վրա»:** /Գրախոսություն/ /Զինացի գրող Դին Լինի «Արևը Սանգան գետի վրա» վեպի մասին/: - Գրական թերթ, Երևան, 1952, 17 հունիսի, թ. 22:

4. **Պերճ Պռոշյան:** /Մահվան 45-ամյակի առթիվ/: - Գրական թերթ, Երևան, 1952, 10 դեկտեմբերի, թ. 45:

5. **Աշոտ Գրաշու Նոր ժողովածուն:** /Գրախոսություն/ / Աշոտ Գրաշի, «Երզն թռչում է աշխարհով»/: - Գրական թերթ, Երևան, 1953, 31 մայիսի, թ. 21:

6. **Հայ ռեալիստական արձակի պատմության հետաքրքիր էջը:** - Գրական թերթ, Երևան, 1953, 25 նոյեմբերի, թ. 43:

7. **«Հյուսիսափայլ» -ի ռեալիստական արձակը:** - ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր. Հասարակական գիտություններ, Երևան, 1953, թ. 12, էջ 41- 60:

8. **«Ծիածանը տափաստանում»:** /Գրախոսություն/ /Հ. Սահյանի «Ծիածանը տափաստանում» ժողովածուն/: - «Սովետական Հայաստան» թերթ, Երևան, 1954, 31 հունվարի, թ. 26, էջ 2:

9. **Մակերեսային գիրք:** /Գրախոսություն/ /Հովհ. Ղանալանյան, «Թումանյանի լիրիկան»/: - Գրական թերթ, Երևան, 1954, 26 հունիսի, թ. 23:

10. **Միջայել Նալբանդյան:** - Գրական թերթ, Երևան, 1954, 25 նոյեմբերի, թ. 43:

11. **Հովհաննես Հովհաննիսյան:** /Մահվան 25-ամյակի առթիվ/: - «Սովետական Հայաստան» ամսագիր, Երևան, 1954, թ. 9, էջ 25-56:

12. **Նալբանդյանի պայքարը քննադատական ռեալիզմի համար:** - Սովետական գրականություն, Երևան, 1954, թ. 10:

13. **Երկու ուրվագիծ:** /Հր. Սուրադյանի «Դերենիկ Դեմիրճյան» և Գ. Ստեփանյանի «Սովսես Արագի» գրքույկների մասին/: - «Սովետական Հայաստան» թերթ, 1954 -? /Թերթի կտրածոն գտնվում է Հայաստանի ազգային արխիվում: Սերգեյ Սարինյանի արխիվ, ֆոնդ 1752, ցուցակ 1, գործ 104/:

14. **«Շիրվանզադեի դրամատուրգիան»:** /Հրանտ Թամրազյանի «Շիրվանզադեի դրամատուրգիան» մենագրության մասին/: - Գրական թերթ, Երևան, 1955, 5 մարտի, թ. 8:

15. **Պայքար ռեալիզմի համար արևմտահայ գրականության մեջ անցյալ դարի 70 - 80-ական թվականներին:** - Սովետական գրականություն, Երևան, 1955, թ. 9, էջ 138-154:

16. **Ռեալիզմի և ժողովրդայնության հարցերը 70-80 -ական թվականների արևելահայ գրական քննադատության մեջ:** - ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր. Հասարակական գիտություններ, Երևան, 1955, թ. 4, էջ 55- 80:

17. **Նայիվ ռեալիզմի մեթոդով:** /Աղավնու «Շիրակ» վեպի մասին/: - Գրական թերթ, Երևան, 1955, 27 մայիսի, թ. 20:

18. **Էդվարդ Ջրբաշյան, Սերգեյ Սարինյան - Ռոմանտիզմի գնահատման հարցի շուրջ:** - Գրական թերթ, Երևան, 1956, 10 հոկտեմբերի, թ. 37:

19. **Բաֆֆու կյանքի ուղին:** - /Խ. Սամվելյանի հեղինակությամբ լույս տեսած Բաֆֆու կենսագրական ակնարկի մասին/: - Գրական թերթ, Երևան, 1957, 16 հունիսի, թ. 22:

20. **«Սուրեն Սպանդարյանը և գրականության հարցերը»:** - Գրական թերթ, Երևան, 1956, 7 նոյեմբերի, թ. 41:

